

ՊԱՏԵՐԱԶՍԸ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան . . . 12 ձր.

Վեցամսեայ . . . 6 "

ԱՐԳՍՍՍԻՄԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 14 ձր.

Վեցամսեայ . . . 7 ձր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօքս

Վեցամսեայ 1.50 "

4 ԱՆԽԻԿ

Ծանոց . . . 20 սանրիմ



ԻՐԱՎԱԳՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԻ ԱՄՆ ԶՈՐԵՔ ՈՒՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

Iravounk

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

Иравунк

ВАРНА

Գրոցրոցիւնք եւ լին տրոցիր

ՆՈՐ ԵՐՐԵՍԿԸ

Կարծուածէն աւելի կարեւորութիւն ստացած ըլլալ կը թուի Լօնտրայի վերջին միջազգային համաժողովը Արեւելեան, ի մասնաւորի Հայկական, խնդրոյ առթիւ. Թրքական բռնութեան դէմ նոյն ձեւով աւելի խիստեղանակաւ միջիններ, համաժողովներ և հարցապնդումներ շատ եղած էին 95 էն իվեր բայց այս անգամ պարագաները խիստ տարբեր են. որովհետեւ Փրանսա ռուս-ճապոնական պատերազմէն շնորհիւ, զերծ իր զինակիցին ջախջախիչ ազդեցութենէն սերտ օրէն բարած է այսօր Անգլիոյ եւ Իտալիոյ. և այսպեսով կազմուած է Եւրոպայի ազատական երեք մեծ պետութիւններու միջեւ բարոյական կապերով ամրապնդուած համաձայնութիւն մը:

Մարդասիրութեան, արդարութեան և զգացումի կապերով կազմուած այս նոր երրեակը այսօր Արեւելքի գործերուն համար աւելի ուժեղ կը հանդիսանայ քան բիրտ կապերով կապուած նախկին երրեակ ու երկեակ զինակցութիւնները. առաջինին կազմութիւնը արդէն վերջի երկուքին ուժը և ազդեցութիւնը սկարացուց ու չլատեց. Իսկ մասնաւորապէս հայկական խնդրոյն համար, Ռուսիոյ ներկայ պատերազմը հերիսային վերան թափուած եիւրջ եկաւ:

Երեք մեծ ազդերու, Անգլիոյ Դաշնոյ և Իտալիոյ, քաղաքական բոլոր կուսակցութիւններէն անխտիր հեղինակաւոր անձնաւորութեանց Լօնտրայի Համաժողովին մէջ եզակտն ներդաշնակութեամբ մը համերաշխութեան գալը ապացոյց մըն է թէ այդ մեծ ազդերու պաշտօնական մարմիններն ալ տրամադիր են վճռական քայլ մը առնելու Պալտոյ մէջ:

Երէկ իրեկուն հասնող թիւնը իր խմբագրականով Լօնտրայի միջազգային համաժողովին և Հայաստանի ու Մակեդոնիոյ վեր-

ջին դէպքերուն մասին խօսելով, վերոյիշեալ երեք պետութիւններուն կառավարիչ հետեւալ կետերուն վրայ համաձայնութեան գալ.

1. Պաշտօնանկ ընել Զէքի փաշան և Ֆէրիտ պէյը.
 2. Պէրլինի գաշնադրին 61 յօդուածը գործադրել ըստ 1896 ի ծրարին
 3. Մակեդոնիոյ միջազգային ոստիկանութեան թիւը աւելցընել.
 4. Իրական հակակշիւ (գոնթրօլ) հաստատել երկու երկիրներուն մէջ:
- Եւ թանք կեցողութեան աշակէս
- «Անգամ մը այս համեստ ծրագիրը որոշուի բաւական է զայն Դրան ցոյց տալ և զգացընել հակառակելու պտրագային այն նաւային ցոյցերէ մին որ Պէրլինի գաշնադրէն ի վեր, հինգ անգամ զանազան տւթիւններով գործադրուեցաւ և յաջողեցաւ:
- Նաև ուրախալի է որ այլևս Եւրոպայիք ալ հասկցած ու համոզուած են թէ Թուրքը իր ձեռքովը ոչ մէկ բարեկարգութիւն ընելու ոչ ընդունակ է և ոչ տրամադիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

Թ.Ա.Ն.Ի հեռագիրները

Պալտո 3 յունիս

Հայ-ճալրայեղ յեղափոխական Հնչակ հոշակաւոր գօնթէն ուրուն վրայ այնչափ խօսուած է 1896 ին, նորէն երկան եկաւ Հայոց դէմ Գիւրաբերու-նոր յարձակումներուն հետեւանքով, կանխաւ համաձայնութիւն մը գոյացընելէ յետոյ ծայրայեղ Մակեդոնացիներու հետ, որոնք գօնթիւններէն անկախ կը գործեն:

Հնչակը ուղղած է պետութեանց դեսպաններուն և երեւելի անձնու կարմիր յայտարարութիւն մը և իմացուցած է թէ պիտի սկսին ոճրագործական

ձեռնարկներու անձնու և հաստատութիւններու վրայ եթէ պետութիւնները վերջ չը գնեն Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ Թուրքիոյ հետեւած ուղղութեան:

Պալտո 2 յունիս

Թուրք պաշտօնական աղբիւրէ առնուած տեղեկութեանց համեմատ, կառավարութիւնը հետեւեալ միջոցները որոշած է.

- 1) Ներում Սասունի Հայոց, բացի անոնցմէ որոնք զէն ի ձեռին բռնուած են և որոնց յայտնութիւնները կապացուցանեն թէ խռովութիւնները առաջ եկաւ ան խռովութիւնները գործադրողներու կողմէ:
- 2) Վերաշինութիւն 547 ալրած տուններու:
- 3) Շուտով վերահաստատել փախստականները իրենց տեղերը:
- 4) Փախստականներու հունտեր և ուտեստ հայթայթել, և զանոնք գործածել Բաղէշի նահանգին ճանապարհաց շինութեան:
- 5) Պահակախումբեր հաստատել ընակչաց ապահովութեան համար:
- 6) Թոյլտուութիւն Սասնոյ լեռնային գիւղերը վերադառնալ ուղղութեան:

Պալտո 2 յունիս

Կառավարութիւնը վախճալով որ ճայրաքաղաքին մէջ շարժում մը կրնայ պատահիլ, առջի օր հարիւրներով Հայեր երկու փոխադրանաւերու մէջ լեցնելով Պալէն ճամբայ հանեց դէպի Սեծով:

Լաւատեղեակ աղբիւրներէ առնուած տեղեկութեանց համեմատ, Գիւրաբեր անպատիժ կերպով կը շարունակեն կողպտել Պէթաթա, Թիլիզաթա, Առնիթ և Ապուալ (.) վայրերը:

Հակառակ ընդհանուր ներում հրատարակուելուն, զինուորական տեսան հաստատած է Մուշ փախչիլ յեղափոխական գործերով աջատանուած Հայերը դատելու համար: Շատ անմեղներ դատապարտուած են:

Բաղէշի վալին զօրը շրկեց Մանաղիկոտ, Պուլանդ, Գլիմիս և Վարթա յեղափոխականներ փնտռելու պատրուակաւ: Զօրքերը ծայրայեղութիւններ գործեցին:

ՊԱՏԵՐԱԶՍԸ

Լոնտոն 21 Յունիս — «Թէօթէք»-ի գործակալութիւնը Զիֆուէն կիմացընէ. «Կը հաւաստեն թէ կիրակի օրը ռուսական եւ ճապոնական զօրքերը իրարմէ մղոն մը հեռու էին: Ժաքոնցիք անգուլ կաշխատին բլուրներուն վրայ մեծ թնդանօթներ դետեղելու:»

Լոնտոն 32 Յունիս — «Թէօթէք»-ի գործակալութիւնը Զիֆուէն կիմանայ թէ Դուրքի զօրավարէն առնուած տեղեկութեանց համեմատ երեկ լուսնալուսն պէս ռուսական երկու կիսափայտեր յարձակեցան Մոթթէնի անցքին յով զանուղ ճարտական յառաջապահներուն վրայ: Ռուսները ետ մղուեցան, բայց երեք անգամ իրենց յարձակումը կրկնեցին և վերջապէս բոլորովին ետ քաշուեցան: Ժաքոնցիները զանոնք հալածեցին մինչեւ անցքէն երեք մղոն հեռու: Ռուսները ունեցան 30 հոյի սպաննուած և 50 վիրաւորուած: Իսկ ճաքոնցից կորուսան է 19 հոգի սպաննուած և 30 վիրաւոր:

Բեդերսպուրկ 22 Յունիս — զօրական Սաքարով հետեւեալ կը հեռագրէ Զարին. «Մեր զօրքերը ամսոյս 20 ին նանչալինի անցքին մօտ դիմք բռնած էին: Երեկոյեան մօտ ճարտական ջոկատ մը մեր ձախ թիւը շրջապատեց: Ռուս ջոկատ մը օգնութեան շրկուեցաւ վտանգուած վայրը: Ասկէ զատ 13 դասակ (պեօլուկ) զօրք զրկեցին որպէսզի հետազօտութիւն մը կատարեն: Սուրնով կոխէ մը ետքը ճարտեցիները վտանգուեցան իրենց դիրքերէն և կիրճը գրաւուեցաւ մեր զօրքերէն: Բայց նկատելով թէ թշնամին որ բազմաթիւ էր կը պատրաստուէր մեր վրայ յարձակելու, մեր զօրքերը պարտաւորուեցան ետ քաշուիլ թշնամուն օպանիլ կրակին տակ, սակայն կատարեալ կարգապահութեամբ: Մեր կորուստներն են քանի մը սպայ վիրաւորուած, որոնց մէջ նաև է զնդական Լեյթիթաքի, 200 էն աւելի զինւորներ ալ սպաննուած ու վիրաւորուած:»



Նշանակութեան արժանի են նաեւ
 երկընթաց ֆրանս. Կառավարութեան ի
 պատու հայոց ըրած ջանքերն, Հան-
 ապետական ժրանսան թէ եւ ի քիչ
 էլ եւ այն էլ այլոց զորամար, սո-
 սայն վերջապէս գիտցաւ իր աւան-
 ական վեհանձնութեան բարձրու-
 եան վրայ կազմած, իր ապագա-
 ան զգացմունքներն գործնականապէս
 յայտ բերելու այսպէսով կերպով մը

մաքրել փափաքելով իր ճակտին արա-
տի աշխարհը բոլոր գործերում նա-
կին անգործն հանդիմանալու պոռնիկ
քաղաքականությունը միայն կրքա-
ստեղծել :

Իսկ այսպէս թէ այնպէս , որդի
չափով միշտ գտնուած են , զրկեալ
մարդութեան սատարները Բիւն Գիւ-
յան , Բեհսանէ եւ ժողովներ թշուառ
հայութեան այդ անձնուէր , կրտսերին
ձեռք ձեռքի առած արդարութեան
գոռ ձայնը նոյն իսկ ամենէն խուլ
կարծիքով ալ անհնարուն լսելի ըրին ,
ու անուշայ արտերն ի գոթ շարժելով
պահանջկոտ շնչառով մը ու կէս սպառ-
նայեալ ստիպելով որ մեք մարդասպա-
նը , ընտրողի արեւնախումբ լորենին
իր անյայտ սուրն ի պատեան դարձնէր ,
ուրիմն ձրտնաւն , իւր Բեհսանէնե-
րով յաղթող հանդիմանում :

Ս. որքան կրտսերազէտ կզգայ ար-
դեաք հայութիւնը զինքը հանդէպ այդ
անձաններու երկրակին , որը միտանողի
կլարաբովանդակ վերջ կ'ընէ : Այնչափ
արժանապէս փայլելէ ներապտութեան
պայծառ հորիզոնին վերայ իբրեւ
մշտափայլ աստղեր : Թող ազդին ա-
նունք եւ իւրեանց նմանիք . հազար
ապրին , անունք մարդկութեան պար-
ծանքն են , իսկ ձրտնաւնի դարձը :

ՎԱՌՆԱՅԻ

ՊՈՐԿԱՅԻ ԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Դրոշակեաններու Պայգանեան շրջա-
նակի Պատգամաւորական ժողովը (•) հարկ
գաւեր են Պուրկաղի 28 մասուկ-
ներու խաչագողութեան խնդիրը ԴԻՍ-
ՇԱԿԻ վերջին թիւին մէջ ծառայա-
նել տալ , Կարգուն անմիջ հաջակելու
եւեթ նպատակաւ :

Հինգ տարի առաջ պալլանեան ներ-
կայ ցուցիչ Կարգոյի քերէն Զտակ
ու գիտակցութեամբ 28 մասուկներու
վաճառումը եւ յանցաւորները այսօրմի-
այն—5 տարի յետոյ —հրապարակ կը
տրուին , երբ պիտի կարապետ Մար-
տիրոսեան եւ Մաքսուտ Պալիկեան
սպաննուած եւ մուծ են , հետեւա-
պէս ի վիճակի չեն իրենց մեղսակից-

ները յայտնելու , իսկ պոռնիք որչափ
կապրէին խոստումներով եւ սպառնա-
լիքի տակ բերանին գոցուած էր մեղ-
սակիցներն չը յայտնելու համար :

Սկիզբէն ի վեր մեղ չէր հետաքրք-
րած այդ 28 մասուկէն Կարգոյին որ-
չափ բաժին առնելը կամ չառնելը .
մենք անուիւր խաչագողութիւնը հրա-
պարտեալ էինք եւ զխառն պատա-
խանաւորներն մին ճանչցած էինք
Կարգոյն որ , իբր ներկայացուցիչ , իր
քերէն տակ գործուած այդ խաչագո-
ղութեան համար պատախանապաշտ էր ,
մանաւանդ երբ Պուրկաղէն կը պնդէին
թէ բուն ժամանակին նամակով եւ հե-
ռազրով իրեն տեղեկութիւն տրուած
էր որ համար եւայն պոռնիքը յաջողու-
թունք ծախուիլ սկսած էին . բայց
վարդուն սոս խուլ եւ համար ձեւացած
էր :

28 մասուկէն միայն չորս մասուկը
ծախող կարապետ Մարտիրոսեանը ըս-
պաննուեցաւ , երեւոյթը վերելու հա-
մար , ամբողջ ընտանիք մը թշուառ-
ցնելով եւ անչափահաս զաւակներ սր-
բացնելով : Ատով ծածկուեցան նաեւ
«վարագոյրին հետեւ խոշոր դէմքերը» ,
որոնց համար կ'սկսեալ թէ՛ Մար-
տիրոսեանը եւ թէ՛ Ս. Ա. Ը . Ա. հա-
յոյ խոշոր դէմքերն են որ յախտնա-
պէս գաղտնի մնալ դատապարտուած
են շնորհիւ Եարդ մը դարձուածնե-
րու :

ԱԶԳԱՅԻՆ

Սուրբնայի Թաղ Խորհրդոյ
մէկ անգամը մեղ կը գրէ թէ
իրենք բնաւ տեղեկութիւն չու-
նին Մկրտիչ Մարթարեան ա-
նուն անձը տեղւոյն եկեղեցւոյն
վրայ քահանայ ձեռնադրել տա-
տալու պաշտարկէն , հետեւաբար
կեղծ եղած պիտի ըլլայ Պատրի-
արքարան զրկուած այն նամակը
եւ թէ Մկրտիչ միւլթարեան ան-
արժան է քահանայ ձեռ-
նադրուելու :

Պոլսոյ Կրօն Ժողովոյ որո-
շումներուն մէջ մենք կարդա-
ցած էինք Սուրբնայի Թաղ Խոր-
հրդոյ անուամբ եղած այդ դի-
մումը եւ ժողովին որոշումը :
Ուստի քանի որ պաշտօնակ
անուն մը կը խաղաղութիւն կը
կեղծուի , հարկ է որ տեղւոյն
Թաղ Խորհուրդը այդ կեղծիքը
պաշտօնապէս իմացնէ Պատրիար-
քարան , որպէս զի սա յետ պսո-
րիկ զգուշանայ այդ օրինակ խա-
ղախան գիմումներէ : Կերեւայ
թէ ձեռք մը թաղակառութեան
պաշտօնակն կ'ընէր ի զո ծած-
ուած է . հետեւաբար զուտ կեղծա-
րարութիւն մըն է եղած : Կեղ-
ծարարը պէտք է պատժուի ու
խայտառակուի :

Այս գործին մէջ չենք կար-
ծեր որ բոլորովին անմեղ ու ան-
տեղեկ եղած ըլլայ Մկրտիչ
Մարթարեան անուն անձը , որ
քահանայ ձեռնադրուիլ կուզէր :
ՊՈԼՍՈՅ Ազգ . Հիւանդանոցին
երրորդ թիւը շինելու համար ,
Յունաց Հիւանդանոցին պատկա-
նող յարակից գետինը Յոյները
չեն հաճած , նոյն իսկ կրկնապա-
տիկ գնով ծախել իրենց սովորա-
կան եղած շարակառութեամբ ու
նախանձութեամբ : Ուստի Հո-
գարարութիւնը անմիջական
պէտքին առջև կը խորհի արդի
չէնքերուն վրայ նոր յարկ մը
աւելցնել : Կոհութեամբ կ'իմաց-
ուի թէ բարեւէր անձեր պատ-
րաստականութիւն յայտնած են
նպատակներ տալու նոր կառուց-
ուելիք շէնքին համար :

—Արշակ Սանտեան անուն
Տրապիզոնցի երիտասարդը հինգ-
շաբթի իրիկուն լուացուելու
համար երկու ընկերի հետ ծով
երկալով , բարձրէն գլխովար

վաի կը նետուի , կարծելով թէ
բաւական խոր է . բայց շուրը
հաղիւ կէս մէկը բարձրութիւն
ունեցած ըլլալուն պատճառաւ ,
գետինին սաստիկ բախողելով
իրանը անզգայութեան կը մտ-
նուի , իսկ խօտելու կարողութիւ-
նէն չիյնար մինչև առաւօտ .
բայց աւաղ , բժշկական դար-
մանները ապարդիւն կը մնան ,
եւ Արշակ երէկ առաւօտ ժամը
6 ին իր վերջին շունչը կը փչէ :
Յուզարկաւորութիւնը կատար-
ուեցաւ իր ընկերներու եւ հայ-
րենակիցներու բաւական հոծ բազ
մութեան մը ներկայութեանը :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԵՐԿՍԵՌՈՐ ԲՐԻՒԿՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ընկերութեան Է. Բրոքի Գողովը որ
պիտի գումարէր յունիստիս անբաժնոց
մեծամասնութիւն չը դոյնաւարով յե-
տաձգուեցաւ յառաջիկայ կիրակէ
յունիս 27 ին , կէս օրէն վերջ ճիշդ
ժամ 2 ին ազգ . վաճառքանի սրահը ,
Ըստ տրամադրութեան կանոնադրի
Թ. Բրոքի յօդուածին ներկայ եղող
անդամներ մեծամասնութիւն պիտի
նկատուին եւ պիտի ձեռնարկեն Կրօն
Ժողովոյ հաշիւները վաւարացնելու եւ
նոր գործ . Ժողովոյ ընտրութեան կա-
տարել . որով բացակայ եղող անդամներ
վերջէն դիտողութիւն ընելու իրա-
ւունք չպիտի ունենան :

Ուստի լիադէպ եւք որ ընկերու-
թեանս պատ . անդամներ ներկայս իբր
հրաւիրագիր ընդունելով պիտի բարե-
հաճին որոշեալ ժամուն ներկայ գրտ-
նուիլ եւ իրենց անգամական պարտա-
կանութիւն կանոնակարգել :

Մնամք Յարգանք

Ի զիմաց ընդհ . Ժողովոյ դիւանի
ատենադպիր ատենապետ
Ս . Փաքաշեան Կ . Գեորգեան

ՎԵՐԱԾԵՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Սրտատպուած «Բանասէր» Հանդէսէ)

(Շար . նախորդ թիւէն)

1828 թուի մարտ ամսին նոցա երկուսի յարա-
բերութիւններն այնքան լարուեցան որ Պատկիւ-
նը Ներսիսին հեղափոխեց եւ չը թոյլ տուաւ միայն-
գամայն խառնուել Երեւանու նահանգի կառավար-
չութեան գործերում , միայն Դիւրիսին տեղեկութիւն
տուեց . թէ ինքը ամենայն քաղաքավարութեամբ
եւ առանց ինչ վիրաւորանքի է կատարել այս գոր-
ծը . . .

Այնուհետեւ Պատկիւնը մի քանի շարունակ յայ-
տարարութիւններով սկսեց կասկածելի ցուցանել
(գրեկեղիտիքով) Ներսիսին թաղաւորի աչքում
պսկելով թէ ինչ որ նա կատարել է Ռուսաստանի
համար եւ ինչ որ իւր անցեալ կեանքի մէջ արել
է , այդ ամենը ոչ այլ ինչ էին , եթէ ոչ մի չարք
խառնակութիւններ (ինտրիգներ) որ յառաջ էին ե-
կել նորա ինքնիշխան բնաւորութիւնից եւ փառա-
սիրութիւնից :

Այս յայտարարութիւնները վերջ ի վերջոյ հասան
Իրեւանց նպատակին :

Եւ անո 1828 թուականի յուլիսին Դիւրիսին Էրզն
այնպէս է գրում Պատկիւնին . «Ձեր պայծառա-
փայլութեան բազմազմի յայտարարութիւններից
թաղաւոր կայսրը նկատել է , որ Ներսէս Արքե-
պիսկոպոսի գործողութիւնները շատ զգալիբարձր հո-
կատակ են մեր կառավարութեան տ' սակեւորներին եւ
օգուտներին , որին ապացոյց է հայ գիւնտորներին
տուած դանդաղ , որոնց Ներսէս ինքնազուլու
պարտաւորացրել էր 25 տարի էլ միտնումը ծա-
ռայել : Այս ամենը տեղիք են տալիս մտածելու ,
թէ դուք Ներսէսը որ եւ է գաղանի նպատակներ
ունի Ռուսաստանին միացրած նահանգների մասին ,
Ահա ինչ է պատասխանում սրբան Պատկիւնին :

«Ներսիսի բռնած ընթացքը ոչինչ չիստակար
եւ հակադէմութիւնական մտադրութիւններ , կամ
Ռուսաստանի միացած երկրների մասին սր եւ է
գաղանի դիւրաւորութիւններ չի արտայայտում : Ընդ-
հակառակն պարսկական պատերազմի ժամանակ Ներ-
սէսը միշտ պատրաստականութիւն էր յայտնում մեր
օգտին ծառայելու եւ անձնութիւն էր ցոյց տա-
լիս զգալի Ռուսաստանը :

Բայց որքան եւ արդարացիւմ նորան այս
մագուժը , եւ չեմ կարող լուել եւ չասել , թէ նո-
րա փառասիրութիւնը (վէստաօքեթիւ) շատ հեռու
է ստանում նորան իւր պարտականութիւններին
կոչումի եւ աստիճանի սահմաններից եւ թէ նա
ոչ միայն հոգեւոր , այլ եւ աշխարհական գոր-
ծերում եւս ցանկանում է գործել անսահման իշ-
խանութեամբ . . . վեհափառ Ներսէս կաթողիկոսի

զառամելութիւնը եւ տկարութիւնը միջոց տուին
նորան իւր ձեռքն առնել Հայոց եկեղեցական վար-
չութիւնը , նա այսքանով չը բաւականացած լուա-
րածում էր իւր իշխանութիւնը եւ աշխարհական
գործերի վերայ եւ կամենում է ցոյց տալ իմեն ինչ-
պէս զլուի եւ կառավարիչ ամբողջ Հայ աշխու-
թեան :

Այս մասին այսքան մեծ էր նորա փառասիրու-
թիւնը , որ նա սկսեց յուսադրական խրախուսա-
ղիւր (պրիկլաւսցի) ուղարկել արտասահմանեան
Հայերին եւ մերձակայ տաճկական սահմաններից
կառավարիչներին հետ յարաբերութիւններ հաստատեց
եւ ամեն ժամանակ ներկայացնում էր իրեն ինչպէս
զրացի եւ Արփաչայ գետի ափունքի տեղապետ
միշտ , բաժանելով իւր սեպական օգուտները տէ-
րութեան ընդհանուր շահերից . . . Բացի դրա-
նից շատ անգամ է Ներսէսը արեւայայտել իւր միա-
կողմանի դիտաւորութիւնները լիցիւնների եկա-
մունքները աւելացնելու համար , թէկուզ նոքա
վնաս եւս պատճառին տէրութեանը . Երեւանում
պատահած յայտնի անբաւականութիւնների պատճառ-
ներից մէկն էլ այն էր , որ Ներսէսը հէնք առաջին
անգամից նկատեց , թէ եւ որքան էր աշխատում
արթնանալ շահերը պաշտպանելու համար եւ հասկա-
ցաւ , որ եւ սաստիկ գիմումը չէր եւ իւր դիտաւո-
րութիւններին , որով նա մտադիր էր հայ . եկեղե-
ցիկներին սեպականացնելու իրանց չը պնդելնեք
կալուածքները ու եկամուտները :

(Շարունակելի)

